

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԵՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ
(ըստ հայ արձակից բերված օրինակների)**

Հայերենի խոսակցական լեզվում հաճախադեպ են ստորադասական կառույցների կապակցման նշույթների սխալ կիրառությունները, որոնք արտացոլվում են նաև գեղարվեստական խոսքում: Դրանց մեջ ուշագրավ են հատկապես *որպեսզի* և *երբ* շաղկապների գործածության շեղումները: Անցյալ դարի 50-60-ական թթ. հայ արձակից քաղված օրինակներով քննվում են նշված շեղումների իմաստաքերականական առանձնահատկությունները: Առաջարկվում է ազգային լեզվամտածողությունը գերծ պահել օտարամետ տարրերից՝ դիդակտիկ լեզվաբանության գործադրման միջոցով:

Առանցքային բաներ. բարդ ստորադասական նախադասություն, խնդրային ստորադասություն, ստորադասական շաղկապներ, կախյալ նախադասություն, նպատակի պարագա, խնդիր:

Գեղարվեստական խոսքը ազգային լեզվամտածողության հայելին է: Այն լավագույն միջոցն է՝ պահպանելու և սերունդներին փոխանցելու ժողովրդախոսակցական լեզվի գանձարանը՝ իր խոսքային կառույցների լեզվաճական բազմաշերտ դրսևորումներով: Այն նաև կախարդական հայելի է, որն ունի հակընդդեմ գործառույթներ, այսինքն, մի կողմից՝ ամրապնդում է լեզվական նորմերը, մյուս կողմից՝ նպաստում լեզվական շեղումների տարածմանը:

Չնայած լեզվի զարգացման պատմությունը հուշում է՝ «չբռնանալ զարգացման ընթացքին, արհեստականորեն իրար չհակադրել աղբյուրները, թողնել, որ ժամանակը որոշի դրանց պատմական դատապարտվածության չափն ու աստիճանը» [1, 179], սակայն չի կարելի անտեսել նաև այն իրողությունը, որ այդ շեղումների զարգացման միտումը կամ կարճատև կյանքի «դատապարտվելը» մեծապես պայմանավորված է դիդակտիկ լեզվաբանության ուսուցողական գործառույթով:

Գեղարվեստական խոսքում հանդիպում են խոսքային բարդ կառույցների կապակցման միջոցների սխալ կիրառություններ, որոնք հակասում են լեզվական նորմերին թե՛ իմաստային, թե՛ քերականական առումով: Նմանատիպ շեղումային դրսևորումներից են *որպեսզի* և *երբ* նշույթների գործածական սխալները, որոնք ձևավորվել են դեռևս անցած դարում:

Արդի հայերենի բանավոր և նույնիսկ արդեն գրավոր խոսքում իր անհարկի, ոչ տեղին գործածությամբ «մակաբուծային» դեր է ստանձնել հատկապես **որպեսզի** պարագայական շաղկապը: Ստորադասական խնդրային կառույցներում այն հավակնում է գրավել *որ*-ի տեղը: Այս շեղման տարածմանը, անշուշտ, նպաստում են մամուլն ու հեռուստատեսությունը, ինչպես նաև բարձր ամբիոններից հնչող խոսքը: *Որպեսզի*-ի սխալ գործածման ակունքները գալիս են խորհրդային տարիներից, երբ միութենական բոլոր երկրներում աներկբայորեն իշխող էր ռուսական մշակույթը:

Անցյալ դարի 50-60-ականների հայ արձակից քաղված օրինակները ասվածի վառ ապացույցներ են:

Օրինակ. Արդյոք դուք չե՞ք կարող կարգադրել այդ գազաններին, *որպեսզի* դրանք մարմնական պատիժներին վերջ տան [2, 96]: Բժիշկը ձեռքի նշանով չթողեց, *որպեսզի* Ազադին շարունակի [3, 214]: Երեկոյան նա դեմ չեղավ, *որպեսզի* Շուքուֆեն գնա Ազադիի մոտ [3, 209]: Դա չի խանգարում, *որպեսզի* ես կանգնեմ զգաստ, զինվորական օրենքի համաձայն պատիվ տամ [4, 17]: Մարդիկ իրենք էին նետվում գործի մեջ՝ առանց սպասելու, *որպեսզի* նրանց գործի դնեն [5, 89]: Ես խնդրեցի ծղրիդին, որպեսզի այս մտքով մի երգ հորինի և վերջին երեկոյան երգի [6, 529]: Ես նկատի ունեմ, *որպեսզի* մի խումբ մեր ակտիվիստներից, որոնց թվում քեզ էլ, ուղարկենք սովորելու [7, 390]: Այդպիսի բույսերը կարող են հողը պահել, թույլ չտալ, *որպեսզի* քամին, անձրևաջրերը քշեն [4, 253]:

Բերված օրինակներից ակնառու է դառնում **որպեսզի** շաղկապի սխալ կիրառության հաճախադեպ լինելը: *Որպեսզի*-ն բուն նպատակի պարագայական շաղկապ է, որը «գերադաս նախադասության հետ կապակցում է նպատակային հարաբերության մեջ գտնվող ստորադասական նախադասություններ» [8, 475]: Մինչդեռ նշված նախադասությունները բնույթով խնդրային են, որոնց գերադաս բաղադրիչները կախյալներին կարող են կապակցվել միայն *որ* ստորադասական մեկնական շաղկապով: Դրանց բոլորի գերադասները պահանջում են խնդիր երկրորդական նախադասություններ. ներգործական սեռի բայ-ստորոգյալի դեպքում՝ ուղիղ, չեզոքի դեպքում՝ հանգման: Առանց այդ կախյալների՝ գլխավորի միտքը կմնա թերի, նույնիսկ կիսատ:

Այսպես, օրինակ, վերը բերված ստոպադասական նախադասություններից մեկի՝ «Այդպիսի բույսերը կարող են հողը պահել, թույլ չտալ» [4, 253] գերադասն առանձին գործածելու դեպքում կիսատ միտք է և անխուսափելիորեն պահանջում է ուղիղ խնդիր լրացում (թույլ չտալ ի՞նչ՝ քամու, անձրևաջրերի [հողը])

քշելը): Կամ՝ «Մարդիկ իրենք էին նետվում գործի մեջ՝ առանց սպասելու» [5, 89] բաղադրիչը թերի է՝ առանց հանգման անուղղակի խնդիր լրացման (ինչի՞ն՝ նրանց գործի դնելուն):

Ժողովրդախոսակցական լեզվում հաճախ հանդիպում է հակառակ գործընթացը, երբ *որպեսզի* շաղկապին գալիս է փոխարինելու *որ*-ը: Բանն այն է, որ վերջինս ստորադասական շաղկապներից ամենամեծ կիրառությունն ունեցող նշույթն է, քանի որ այն որպես կապակցման միջոց կարող է դրվել բայիմաստային բոլոր խմբերի (կամային, իմացական, զգացական, ասացական, նյութական և այլն) պահանջով և, որ ամենակարևորն է, կապակցման միջոց է այնպիսի կառույցների համար, որոնց գերադասի խնդրառու բայն ունի **նպատակի իմաստային երանգ** և պահանջում է կատարվելիք գործողություն (*ուզել, ցանկանալ, առաջարկել, քարոզել, խոստանալ, մոռանալ, կարգադրել, հրամայել, պատրժել, փրկել* ևն): Ուստի այն երբեմն կարող է գործածվել այլ շաղկապների փոխարեն՝ առանց խաթարելու կառույցի իմաստաքերականական ամբողջությունը: Այսպես, օրինակ, «Յեխոտ ձեռքերով բարձրացրեց երեսնիվայր պառկած փոքրիկին, *որպեսզի* մայրը հնարավորություն ունենա խոսելու անձանոթի հետ» [3, 290] նպատակի պարագա ստորադասական կառույցում *որպեսզի* նշույթի փոխարինումը *որ*-ով փոխում է միայն ոճական երանգավորումը, սակայն առանձնապես չի ազդում երկրորդական նախադասության բնույթի վրա. այն շարունակում է ունենալ նպատակի պարագայի քերականական գործառույթ: Մինչդեռ վերը բերված օրինակներում *որպեսզի*-ն չի բավարարում գերադաս նախադասությունների խնդրային պահանջը, քանի որ դրանց ստորոգյալներն առաջադրում են *ի՞նչ, ինչի՞ն* և գործողությունը բացահայտող նման այլ հարցեր (Ես խնդրեցի ծղրիդին (*ի՞նչ*), *որ* (և ոչ *որպեսզի*) այս մտքով մի երգ հորինի: Երեկոյան նա դեմ չեղավ (*ինչի՞ն*), *որ* (և ոչ *որպեսզի*) Շուքուֆեն գնա Ազադիի մոտ):

Նմանատիպ շեղում երբեմն հանդիպում է նաև այնպիսի բարդ կառույցներում, որոնց կապակցման գործընթացում խնդրային *որ* նշույթին փոխարինում է **երբ** ժամանակի պարագայական շաղկապը:

Օրինակ՝ Ավետը սիրում էր, *երբ* մարդիկ հետաքրքրվում էին իրենով [9, 71]: Չեմ սիրում, *երբ* մարդիկ մեռնում են նստած [10, 21]:

Այս դեպքում նույնպես սխալն ակնառու է դառնում գերադաս նախադասության խնդրառու բայի գործողությունը լրացնող տրամաբանական հարցով. Ավետը սիրում էր (*ի՞նչ*), *որ* (և ոչ *երբ*) մարդիկ հետաքրքրվում էին իրենով [9, 71]: Չեմ սիրում (*ի՞նչ*), *որ* (և ոչ *երբ*) մարդիկ մեռնում են նստած:

Հարց է առաջանում՝ որո՞նք են այս շեղումների պատճառները: Եվ կա՞րողյոք անհրաժեշտություն պայքարելու նման շեղումների դեմ: Վերջապես, ժամանակի ընթացքում լեզվական նորմի կարգավիճակ է ձեռք բերում այն տարբերակը, որն իր կիրառման հաճախականությամբ գերիշխող է դառնում սահմանվածի նկատմամբ:

Իհարկե, ինչպես արդեն նշվեց, կարելի է պատահառաքանել, որ պարագայական շաղկապների գործածությունը խնդրային կառույցներում ունի ոճական հիմնավորում, քանի որ դրանց առկայությամբ անուղղակիորեն շեշտվում է գործողության կատարման հատկանիշը, հանգամանքը՝ մի դեպքում՝ նպատակի (*որպեսզի*), մյուս դեպքում՝ ժամանակի (*երբ*) նրբիմաստով:

Սակայն ակնհայտ է, որ դրանք բանավոր-խոսակցականում ռուսերենից պատճենված լեզվական շեղումներ են, որոնք, արտացոլվելով գեղարվեստական արձակում, մնայուն տեղ են գրավել նաև արդի հայերենի խոսակցական լեզվում: Նման պատճենումները վտանգում են ազգային լեզվամտածողությունը, և հարկ է կանխել դրանց ներթափանցումը մայրենիի տիրույթ՝ դիդակտիկ լեզվաբանության մեջ մշակելով ուսուցման և քարոզչության արդյունավետ համակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղաբաբյան Ս.**, Դասականներ և ժամանակակիցներ, 1986, էջ 179:
2. **Ավագյան Ա.**, Վաղը, Ե., Հայպետհրատ, 1951, 236 էջ:
3. **Սևունց Գ.**, Թեհրան, Գ. 2 [[Երկեր 5 հատորով: Հ. 2, Ե., 1963, 599 էջ:
4. **Հովսեփյան Բ.**, Սերմնացանները չվերադարձան, Ե., Հայպետհրատ, 1962, 291 էջ:
5. **Հրաչյան Խ.**, Ուրցի Մարան (վեպ), Ե., Հայպետհրատ, 1961, 336 էջ:
6. **Մահարի Գ.**, Երիտասարդության սեմին, Ե., Հայպետհրատ, 1956, 667 էջ:
7. **Թաթևիկյան Շ.**, Նրա ճանապարհը: Գ. 2-րդ, Ե., Հայպետհրատ, 1958, 475 էջ:
8. **Աբրահամյան Ս.Գ.** Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, 567 էջ:
9. **Խանզադյան Ս.**, Հողը, Եր., Հայպետհրատ, 1957, 764 էջ:
10. **Պետրոսյան Վ.**, Վերջին գիշերը, Ե., Հայպետհրատ, 1959, 228 էջ:

Л.У. АЙРАПЕТЯН

**ОТКЛОНЕНИЯ В УПОТРЕБЛЕНИИ ПОДЧИНИТЕЛЬНЫХ СОЮЗОВ
В ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ
(на примере армянской прозы)**

В разговорной речи армянского языка часто встречается неправильное применение союзных средств подчинительных конструкций, которые отражаются также в художественной речи. Особенно интересны отклонения в употреблении союзов “чтобы” и “когда”. На примерах армянской прозы 50-60 гг. прошлого века анализируются семантико-грамматические особенности указанных отклонений. Предлагается оградить национальное языковое мышление от чуждых элементов с помощью применения дидактической лингвистики.

Ключевые слова: сложноподчиненное предложение, дополнительное подчинение, подчинительные союзы, второстепенное предложение, обстоятельство цели, дополнение.

L.U. HAYRAPETYAN

**DEVIATIONS IN THE USE OF SUBORDINATE
CONJUNCTIONS IN FICTION
(ON THE EXAMPLE OF ARMENIAN PROSE)**

In colloquial Armenian we often encounter the incorrect use of subordinate connectives, which is also reflected in fiction. Of particular interest are the deviations in the use of the conjunctions "so that" and "when". The semantic-grammatical features of these deviations are analyzed on the examples of Armenian prose of 50-60s of the last century. It is proposed to protect national linguistic thinking from foreign elements through the use of didactic linguistics.

Keywords: complex sentence, secondary subordination, subordinate conjunctions, secondary clause, adverbial modifier of purpose, object.